25. ՍԻՐԱԿԱՆ ՊԱՀՈՂ ԿԸՆԵԳՅԸ

Ինում ա, չի ինում մին մարթ նան մին կնեգյ ըն ինում։ Տրանքուրուր նհետ լավ ապրելիս ըն ինում։ Կնեգյը սիրական ա պահելիս ինում, ամմա մարթը գյիդալիս չի ինում։ Կնեգյը մտածում ա հո՞ւնց անի, վեր մարթին անա ազադվի, դինչըմը քյեփ քաշի։ Ըտրա հետե սոտ տեղան հիվանդանում ա։

Մարթը կյամ ա, տըեսնում հիվանդ թեքյ ընգած։ Հըրցնում ա.— Խե՞ յըս հիվանդացալ, հի՞նչտ ա ցավում։

Կնեգյն ասում ա.— Մին անմահական խնձոր ինի, օտիմ, կսղանամ։

Մարթը որոշում ա քյինի հշտղա վերե յա անմահական խնձորը ճարե պիրի, կնեգյը օտե, թաքյ լհա սղանա։

Ասըմ ա.— Տու վրս իմ մալըս, մուլքյըս, դովլաթըս, տոնըստեղըս, իլած-չիլածըս, սերըս-սոհրաթըս։

Ը՝ ա կենում ճընապար ընդնում, քյնում։

Քյնում ա, քյնում, շատ ա քյնում, թա՝ խրեգյ, շատ նանխրեգյը ինքյն ա գյիդում, մին էլ ա տեսնում մին մարթ մին ծիյապեռնը պիրինձ ծիյին քըցած տես ա կյամ։

Էտ ծիյավերը հըրցնում ա, ասում.— Ա՛յ մարթ, էտ հի՞նչ տեղըս քյնում։

Էտ մարթը սկսում ա նաղլ անելը, ասըմ.— Կնեգյըս հիվանդ թեքյ ընգած ա, քյունում ըմ անմահական խնձոր պիրիմ, վեր կնեգյս օտի, սղանա։

Էտ մարթը գա̈ստի կլո̈խ ա ընգնում էտ կնգանը պիճոթումը, ասում ա.— Խըեղճ ըս, եք, էտ տըեռ քյինինքյ, քու կնեգյըտ հի-վանդ չի։

Էտ մարթն ասում ա.— Չէ, կնեգյըս ինձ խափել չի, իմ կնեգյըս հիվանդ ա։ Էտ մարթը ասում ա։

— Դե եք էտ տըեռ քյինինքյ, թա̈ վեր քու կնեգյտ էն չինի սի-րականին նհետ քյեփ ընելիս, յըես իմ մին ծիյապեռնը պիրինձս քյըեղ կտամ։

Էտ մարթը եր ա կենում էտ ծիյավերեն նհետ կյամ տոն, տըես-նում կնեգյը սիրականին նհետ քյեփ ա անում։

Դե էլ հի՞նչ, մընում ա փա̈ռթ տըեռած։ Ասըմ ա.— Ա՛ տափ, տու ճըղվի, յըես մըեչը նի մըննիմ, վեր իստի խայտառակչոթումը չըես տըեսնամ վեչ։